

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԱՀԱԳՆ ՍՈՒՐԵՆԻ**

**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԵՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ  
ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ը.00.03 - «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ  
տնտեսագիտության թեկնածուի զիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2013**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

*Գիտական ղեկավար՝*

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Կորյուն Լուկաշի Աթոյան

*Պաշտոնական ընդդիմախոսներ՝*

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Աշոտ Բորիսի Մալազարյան

Տնտեսագիտության թեկնածու  
Արևշատ Վարդանի Մելիքսեթյան

*Առաջատար կազմակերպություն՝*

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. մայիսի 16-ին, ժամը 15<sup>30</sup>-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2013թ. ապրիլի 15-ին:

014 Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Ա. Լ. Ասլանյան

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Ազգային ապահովագրության համակարգի զարգացումը և քաղաքակիրթ ապահովագրական հարաբերությունների ձևավորումը շուկայական ենթակառուցվածքների ձևավորման մակրոտնտեսական կարևոր խնդիրներից են:

Ապահովագրության դերն ու նշանակությունը տնտեսական բարեփոխումների համատեքստում սկզբունքորեն աճում է՝ կապված շուկայական հարաբերությունների և գործարար ակտիվության խթանման, ներդրումային միջավայրի բարելավման և ռիսկերից պաշտպանվելու հնարավորությունների ընդլայնման ու նոր տնտեսական, սոցիալական, տեղեկացված միջավայրի ձևավորման հետ:

ՀՀ ապահովագրական շուկան, որի տարրերը սկսել են ձևավորվել դեռևս պլանային տնտեսության օրոք, համաշխարհային ապահովագրական շուկան ներկայացնող երկրների շուկաների համեմատությամբ սաղմնային փուլում է և զգալիորեն հետ է մնում մատուցվող ծառայությունների տեսականիով, կառուցվածքով, խտության և ՀՆԱ ներթափանցման մակարդակը ներկայացնող ցուցանիշներով:

Հայաստանի ապահովագրական շուկայի իրավական նորմատիվային հիմքերի ձևավորման, դրանց եվրոպական չափանիշներին համապատասխանության, շուկայի զարգացման միտումներին, ապահովագրական ընկերությունների վճարունակության, վարկանիշային գնահատականների հաշվարկման մեթոդաբանության, շուկայի զարգացման հայեցակարգային մոտեցումների առանձին հիմնահարցերի վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվել ՀՀ ԿԲ-ի մասնագետների, Ա.Մարկոսյանի, Ա.Քառյանի, Ա.Մելիքսեյանի, Ս.Մարգարյանի և այլ գիտնականների կողմից: Սակայն դեռևս առկա են տեսամեթոդական պարզորոշման կարիք ունեցող մի շարք խնդիրներ, որոնց պարզաբանումը կարող է օժանդակել վերը թվարկված հիմնախնդիրների լուծմանը: Այդ հիմնախնդիրների ուսումնասիրությանն էլ նվիրված է առենախոսությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Առենախոսության հիմնական նպատակն է ապահովագրության շուկայի գործառույթների, ձևավորման սկզբունքների, կառուցվածքին առնչվող հիմնադրույթների, համաշխարհային և ՀՀ ապահովագրական շուկաների վերլուծությունների և համեմատությունների միջոցով գնահատել ՀՀ ապահովագրական շուկայի համապատասխանությունը դասական մոդելին, բացահայտել վերջինիս թերզարգացման պատճառները, առկա հիմնախնդիրները և հիմնավորել ու առաջարկել դրանց հաղթահարման մոտեցումներ:

Այդ նպատակին համապատասխան առաջադրվել են սույն հետազոտության կառուցվածքը և տրամաբանությունը կանխորոշող հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ապահովագրական շուկայի և ապահովագրության դերն ու նշանակությունը շուկայական տնտեսությունում և այդ ոլորտի գործառույթներն

ու տեղը սոցիալ-տնտեսական համակարգում,

- կատարել համաշխարհային ապահովագրական շուկայի և դրա առանձին բաղադրիչ երկրների շուկաների վերլուծություն՝ նպատակ ունենալով բացահայտել դրանց զարգացման միտումները և համեմատություններ կատարելու ՀՀ ապահովագրական շուկայի հետ.
- ուսումնասիրել ՀՀ ապահովագրական շուկայի ձևավորման և զարգացման էվոլյուցիան, իրավական-նորմատիվային հիմքերը և դրանց համապատասխանությունը միջազգային նորմերին,
- կատարել ՀՀ ապահովագրական շուկայի ներկա իրավիճակի և զարգացման հետազոծի վերլուծություն, դրանում առկա հիմնախնդիրների բացահայտման նպատակով.
- ուսումնասիրել ՀՀ ասյառագրական շուկայի կայունության և ապահովագրական ընկերությունների գործունեության համեմատական արդյունավետության գնահատման հիմնահարցերը՝ նպատակ ունենալով գնահատել ապահովագրական ընկերությունների ներուժի օգտագործման մակարդակը,
- կատարել ՀՀ ապահովագրական շուկայում առկա հիմնախնդիրների բացահայտման ուղղված վերլուծություն, նպատակ ունենալով առանձնացնել այն հիմնախնդիրները, որոնց լուծումը պահանջում է պետական միջամտություն,
- մշակել ՀՀ ապահովագրական շուկայում առկա հիմնախնդիրների հաղթահարման և շուկայի զարգացման հայեցակարգային մոտեցումներ:

**Հետազոտության օբյեկտը և արարկան:** Հետազոտության օբյեկտը ՀՀ ապահովագրական շուկան է իր մասնակիցներով, կառուցվածքով, կարգավորման և վերահսկման մեխանիզմներով, իսկ առարկան՝ ՀՀ ապահովագրական շուկայի զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրներն են ու դրանց հաղթահարման մոտեցումները:

**Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:** Ատենախոսության թեմայի ուսումնասիրության համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասականների, հայրենական և արտասահմանյան գիտնականների աշխատությունները, պետական կառավարման մարմինների և ԿԲ-ի կողմից մշակված հայեցակարգերը, ապահովագրության ոլորտին վերաբերվող միջազգային կազմակերպությունների հաշվետվություններն ու գիտամեթոդական մշակումները:

Ատենախոսության տեղեկատվական հիմքը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ ԿԲ-ի, ապահովագրության ոլորտը ներկայացնող ինտերնետային կայքերի տեղեկատվական նյութերն են և ՀՀ կառավարության ու ԿԲ-ի համապատասխան որոշումներն ու սահմանված նորմատիվները:

**Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:** Աշխատանքում նորույթ ենթադրող արդյունքների թվում կարևորվում են հետևյալները.

- առանձնացվել են ՀՀ ապահովագրական շուկայի զարգացմանը խոչընդոտող այն հիմնախնդիրները, որոնց լուծման համար անհրաժեշտ է պետական

աջակցություն և այս համատեքստում հստակեցվել է պետության դերը ապահովագրական շուկայի զարգացման գործընթացում,

- հիմնավորվել է ապահովագրական ընկերությունների համեմատական արդյունավետության գնահատման անհրաժեշտությունը և այս նպատակով «պարփակող թաղանթի» մեթոդի կիրառման հնարավորությունը,
- ներկայացվել է պարտադիր ապահովագրության այլընտրանքային տարբերակներից ընտրության մեթոդաբանություն և առաջարկվել են դրա հիմնավորման մոտեցումներ,
- հիմնավորվել է, որ ՀՀ ապահովագրական շուկայի զարգացմանը խոչընդոտող լուրջ հիմնախնդիրներից մեկը ապահովագրական ենթակառուցվածքների բացակայությունն է և այս նպատակով առաջարկվել է պետություն – մասնավոր գործընկերությունների ստեղծում,
- առաջարկվել է ապահովագրական շուկայի զարգացման ինովացիոն հայեցակարգ՝ հիմնվելով կառավարություն, գիտություն, կրթություն, բիզնես ապահովագրական շուկա ենթահամակարգերի համագործակցության վրա:

**Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը:**

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների, ԿԲ-ի կողմից ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման հայեցակարգերի մշակման, ապահովագրական շուկայի վիճակի, զարգացման հետազոծի ու միտումների ուսումնասիրությունների, ինչպես նաև ապահովագրական շուկայի զարգացման քաղաքականությունն իրողություն դարձնելու նպատակներով:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքները քննարկվել են Հայաստանի ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի նիստում:

Աշխատանքի հիմնական արդյունքներն ամփոփված են հեղինակի 6 գիտական հոդվածներում:

**Հետազոտության կառուցվածքը և ծավալը:** Աշխատանքը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը 132 էջ է (առանց հավելվածները ներառելու):

Ներածությունում հիմնավորվել են թեմայի ընտրությունը, արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել է ատենախոսական աշխատանքի գիտական նորոյթն ու հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ապահովագրությունը շուկայական տնտեսությունում և համաշխարհային ապահովագրական շուկան» գլխում ուսումնասիրվել են շուկայական տնտեսությունում ապահովագրության դերին ու գործառույթներին նվիրված հիմնահարցերը և կատարվել է համաշխարհային ապահովագրական շուկայի վերլուծություն՝ նպատակ ունենալով գնահատել ՀՀ ապահովագրական շուկայի համեմատական զարգացման մակարդակը:

Ժամանակակից շուկայական տնտեսությունում ապահովագրական շուկայի դերն անմիջապես հետևում է ապահովագրության գործառույթներին:

Բացի այն, որ ապահովագրությունը մասնագիտական ապահովագրական ֆոնդ ստեղծելու և վնասը փոխհատուցելու գործառույթների խոշոր ռազմավարական գործոն է դառնում տնտեսության անընդհատ վերարտադրության գործընթացի համար, այն նաև ապահովում է ներդրումներ կատարելու ռեսուրս, հատկապես կյանքի ապահովագրության գծով հավաքագրված միջոցների հաշվին:

Ապահովագրությունը իր «նախագուշական» գործառույթով ևս մեծապես ազդում է տնտեսության վրա: Այսպես, հատկապես զարգացած երկրներում ձեռնարկությունները, որոնք չեն ապահովագրում ռիսկերը, չեն կարող լայնամասշտաբ գործունեություն ծավալել, քանի որ նրանց հետ չեն համագործակցի իրենց գործընկերները:

Ապահովագրական ընկերություններն իրենց վաքքագծով հնարավորություններ ունեն ազդելու գործարարների որոշումների վրա: Չապահովագրելով ռիսկերը, կամ, սահմանելով շատ բարձր սակագներ, ձեռնարկություններին զգուշացնում են վտանգի չափի մասին՝ դրանով իսկ նպաստելով արտադրության անվտանգության ապահովմանը:

Ապահովագրությունը «վերահսկողության» գործառույթով պայմաններ է ստեղծում ստանալու ապահովագրվող առարկայի կամ սուբյեկտի վերաբերյալ համապատասխան նկարագիր, որն օժանդակում է տնտեսավարող սուբյեկտների գործունեության, քաղաքացիների կյանքի և բարեկեցության անվտանգությանը: Առավել ևս, որ ապահովագրության այդ գործառույթի իրականացմանը մասնակցում են համապատասխան ոլորտի արհեստավարժ մասնագետներ:

Ապահովագրությունն իր սոցիալական գործառույթով երաշխավորելով ունեցվածքի կամ եկամտունների ստեղծման հնարավորությունների փոխհատուցումը, երկրի քաղաքացիների մոտ առաջացնում է պաշտպանված լինելու զգացողություն, ինչն էլ երաշխիք է դառնում սոցիալ-տնտեսական կայունության համար:

Համաշխարհային ապահովագրական շուկան, որն ունի անընդհատ զարգացման միտում, ցուցաբերում է որոշակի առանձնահատկություններ: Դրանցից մեկը վերազգային ապահովագրական ընկերություններին առկայությունն է, որոնց ձևավորման գործընթացը սկսվել է նախորդ դարի 70-ական թվականներին և շարունակվում է մինչ օրս, իսկ մյուսը՝ ընկերությունների խոշորացումն է միաձուլման կամ կլանման ճանապարհով:

Ապահովագրական շուկայի կարևոր բնութագրիչներին և ապահովագրության խտությունը՝ մեկ բնակչի հաշվով ապահովագրավճարների գումարը, որը զարգացած երկրներում 2010 թվականին միջինում 3500 ԱՄՆ դոլարի սահմաններում է, և երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) նկատմամբ ապահովագրավճարների մասնաբաժինը (ներթափանցման գործակիցը): Ջարգացած ապահովագրական շուկա ունեցող երկրներում այս ցուցանիշի փոփոխման միջակայքը 2010 թվականին տատանվել է 5.9% - 18.4% սահմաններում:

Հատկանշական է այն, որ վերջին շրջանում զարգացած ապահովագրական շուկա ունեցող երկրների համեմատությամբ զարգացող շուկայով երկրներում նկատվում է առաջանցիկ աճի տեմպ: Ջարգացող երկրներում ապահովագրության խտությունը միջինում կազմել է 110.1 ԱՄՆ դոլար, որը մոտ 32 անգամ փոքր է զարգացած երկրների նույն ցուցանիշից, իսկ ՀՆԱ-ում մասնաբաժինը միջինում 4%-ի սահմաններում է և զգալիորեն զիջում է զարգացած երկրների նույն ցուցանիշին:

Ատենախոսության երկրորդ՝ *«Ապահովագրական շուկայի կարգավորման մոդելները և ՀՀ ապահովագրական շուկան»* գլուխը նվիրված է ՀՀ ապահովագրական շուկայի իրավական հիմքերի ուսումնասիրությանը, զարգացման միտումների վերլուծությանը և շուկայի կայունության և գործող ապահովագրական ընկերությունների համեմատական արդյունավետության գնահատման հիմնահարցերին:

Ըստ ազատակյանացման մակարդակի ապահովագրական շուկայի համաշխարհային փորձում կիրառություն գտած պետական կարգավորման մոդելները, սովորաբար, տրոհվում են երկու դասի՝ «ոռմանո-գերմանական» (կողավորված կամ կոնտինենտալ) և «անգլո-ամերիկյան», որոնք գործում են համապատասխան իրավական հիմքերի համաձայն:

Ապահովագրության պետական կարգավորման կողավորված մոդելին բնորոշ է շուկայի ազատականացման ցածր և վերահսկողության բարձր աստիճան:

Անգլո-ամերիկյան մոդելի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ օրենսդրությամբ, առանց սահմանափակումների մանրամասնեցման, սահմանվում են տնտեսական գործունեության առավել բնօրինակ: Կայունները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակի և վճարունակության վրա:

ՀՀ ապահովագրական շուկան դեռևս առավել մոտ է կողավորված մոդելին:

ՀՀ ֆինանսական համակարգի կայունության ապահովման և ապահով-

վագրության ոլորտի օրենսդրաիրավական դաշտի բարեփոխումների ուղղությամբ կարևոր քայլ էր ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության միասնական մոդելին անցումը, որը զարգացած երկրներում սկսած նախորդ դարի 90-ական թվականներից այդպեսով կիրառություն ուներ:

Այս մոդելի ներդրման համար իրավական հիմք դարձավ «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքը:<sup>1</sup> Այդ օրենքի համաձայն, 2006 թվականի հունվարի մեկից ՀՀ Կենտրոնական բանկին են փոխանցվել ֆինանսական համակարգի երկու կարևոր բաղադրիչների՝ արժեթղթերի և ապահովագրության ոլորտների վերահսկողության և կարգավորման գործառույթները:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքն ընդունվեց 2007 թվականին:<sup>2</sup> Նույն թվականին վերափոխվեցին «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» 54-րդ գլխի գրեթե բոլոր հոդվածները: Կենտրոնական բանկի կողմից վերահաստատվեցին ՀՀ կառավարության կողմից ապահովագրական գործընթացին առնչվող որոշումները, ընդունվեցին բոլորով կանոնակարգող մի շարք ենթաօրենսդրական ակտեր:


Օրենսդրաիրավական դաշտի կանոնակարգման արդյունքում ՀՀ-ում ապահովագրական ընկերությունների թիվը մոտ չորս անգամ կրճատվեց, և 1998 թվականին ապահովագրական ծառայություններ մատուցելու արտոնություն ունեին 20 ապահովագրական ընկերություններ: Հետագա տարիների ընթացքում դրանց թիվն ավելացավ, և 2005 թվականի հունվարի մեկի դրությամբ, ըստ պաշտոնական տվյալների, ՀՀ-ում գործում էին 26 լիցենզավորված ապահովագրական ընկերություններ: Սկսած նշված թվականից այդ թիվը ցուցաբերում է նվազման միտում տարբեր օբյեկտիվ պատճառներով, և 2012 թվականի սեպտեմբերի մեկի դրությամբ ՀՀ ապահովագրական շուկայում գործում են յոթ ապահովագրական ընկերություններ (Գարանտ-Լիմիտես, Ռասկո, Ռեսո, Ռոսգոստորախ Արմենիա, Նաիրի Ինշուրանս, Ինգո Արմենիա, Միլ Ինշուրանս), որոնք իրավունք ունեն ոչ կյանքի ապահովագրության գծով ծառայություններ մատուցելու, ընդ որում, ըստ լիցենզավորման դասերի դրանք շատ քիչ են տարբերվում:

Ապահովագրական ընկերությունների թվի կրճատման վրա իր ազդեցությունն է ունեցել նաև կանոնադրական կապիտալի սահմանվող մեծության աճը (տես գծապատկեր 1): Հարկ է նշել, որ չնայած ապահովագրական ընկերությունների թվի կրճատմանը՝ ՀՀ ապահովագրական շուկան բնութագրող ռեսուրսային և հաշվեկշռային ցուցանիշները դիտարկված ժամանակահատվածում ցուցաբերել են աճի միտում:

<sup>1</sup> «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 22.12.2005 թ.


<sup>2</sup> «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 09.04.2007 թ.





Գծապատկեր 1. Արտոնագրված ապահովագրական ընկերությունների թվի կապիտալը կանոնադրական կապիտալից

Վերջին հինգ տարիների ընթացքում ապահովագրական ընկերությունների ընդհանուր կապիտալի գումարն աճել է մոտ 2.6 անգամ՝ 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմելով շուրջ 14 մլրդ դրամ (փոփոխման դինամիկան ներկայացված է գծապատկեր 2-ում):



Գծապատկեր 2. Ապահովագրական ընկերությունների ընդհանուր կապիտալը 2006-2011 թվականներին (դեկտեմբերի 31-ի դրությամբ)<sup>3</sup>

Ինչպես երևում է գծապատկերից, դիտարկված ժամանակահատվածում ըստ տարիների ընդհանուր կապիտալի աճի տեմպը խիստ անհավասարաչափ է:

Ապահովագրական ընկերությունների գումարային ընդհանուր կապիտալում իր մասնաբաժնով 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առաջատարն է «Ռոսգոստրախ Արմենիա» ապահովագրական ընկերությունը (2.3 մլրդ դրամ), որին հաջորդում են «Ինգո Արմենիան» (2.2 մլրդ դրամ), «Նաիրի ինշուրանսը» ( 1.9 մլրդ դրամ)<sup>4</sup>:


Հայաստանում գործող ապահովագրական ընկերությունների ընդհանուր

<sup>3</sup> Աղբյուրը՝ <http://www.armbank.am>

<sup>4</sup> Աղբյուրը՝ <http://www.armbank.am>

ակտիվները 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 31.5 մլրդ դրամ, որը մոտ չորս անգամ գերազանցում է 2006 թվականին գրանցված տվյալները: Ակտիվներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում բանկերում ավանդներին (47.3%), բանկային հաշիվներին (4.6%), արժեթղթերին (ներառյալ ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը) (16.4%)<sup>5</sup>:

2.2 ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվների դինամիկան 2006-2011 թվականների համար ներկայացված է գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. *Ապահովագրական ընկերությունների ակտիվների դինամիկան 2006-2011 թթ. (այն դրամ)*<sup>6</sup>

Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, ի տարբերություն ընդհանուր կապիտալի փոփոխման դինամիկայի, այստեղ զարգացումը համեմատաբար հավասարաչափ է:

Ակտիվների մեծությամբ Հայաստանում գործող ապահովագրական ընկերությունների շրջանում առաջատար դիրքում է «Ինգո Արմենիա» ՓԲԸ, որի ակտիվների ծավալը 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է շուրջ 7.2 մլրդ դրամ և 2006 թվականի համեմատությամբ աճել է շուրջ 6.1 մլրդ դրամով:


2011 թվականին ապահովագրավճարների ընդհանուր գումարը նախորդ տարիների համեմատությամբ կտրուկ աճել է և կազմել 22.2 մլրդ դրամ, որը գերազանցում է 2006 թվականի նույն ցուցանիշը 3.8 անգամ: Ապահովագրավճարների կտրուկ աճի հիմնական պատճառը 2011 թվականից հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկող ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունն է:

Ապահովագրական շուկան բնութագրող հիմնական ցուցանիշները, որոնք թույլ են տալիս նաև համեմատություններ կատարել տարբեր երկրների ապահովագրական շուկաների միջև, դա մեկ բնակչի հաշվով ապահովագրավճարներն են և


<sup>5</sup> ԿԲ վիճակագրական տեղեկագիրք: 2011թ., էջ 98:

<sup>6</sup> Աղբյուրը՝ <http://www.armbanks.am>

ապահովագրավճարներ/ՀՆԱ հարաբերությունը (ներթափանցման գործակիցը): ՀՀ ապահովագրական շուկայի համար այս ցուցանիշները, չնայած դիտարկված տարիներին ցուցաբերել են աճի միտում, սակայն դրանք այնքան ցածր են, որ ՀՀ ապահովագրական շուկան չի ներառվում անգամ զարգացող շուկաների համակարգում (գծապատկեր 4 և գծապատկեր 5):




Գծապատկեր 4. Մեկ շնչին բաժին ընկնող ապահովագրավճարների զարգացման դինամիկան 2006-2011 թթ. (դրամ)



Գծապատկեր 5. Ապահովագրավճարներ/ՀՆԱ հարաբերության դինամիկան 2006-2011 թթ. (%)

2011 թվականին մեկ շնչի հաշվով ապահովագրավճարների գումարը կազմել է 6936 դրամ, որը 2006 թվականի համեմատությամբ աճել է 3.8 անգամ, իսկ ապահովագրավճարներ/ՀՆԱ հարաբերությունը՝ 0.59%, որը բազիսային (2006 թ.) տարվա համեմատությամբ ավելացել է 0.37 տոկոսային կետով:<sup>7</sup>



Գծապատկեր 6. Վերապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների դինամիկան 2006-2011 թթ. (մլրդ դրամ)


Ապահովագրական ընկերություններն իրենց ոֆիսերը դիվերսիֆիկացնելու և ապահովադիրների շահերը պաշտպանելու նպատակով իրականացնում են վերապահովագրություն: 2011 թվականի ընթացքում ապահովագրական

<sup>7</sup> Զարգացած երկրներում այդ ցուցանիշը 6%-8% սահմաններում է:

ընկերությունները շարունակել են ամրապնդել կապերը և նոր կապեր հաստատել տարբեր վերապահովագրական ընկերությունների և բրոքերների հետ:

2011 թվականին վերապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների տեսակարար կշիռը համախառն ապահովագրավճարների մեջ կազմել է 12.6%:

Ապահովագրության ոլորտը հանդիսանում է ֆինանսական հատվածում ամենաշահութաբերը: Շահութաբերությունը գնահատելու նպատակով ապահովագրության ոլորտում օգտագործում են հետևյալ երկու հարաբերական ցուցանիշները՝ զուտ շահույթ / ակտիվների միջին մեծություն (ROA) և զուտ շահույթ / ընդհանուր կապիտալի միջին մեծություն (ROE): Ակտիվների շահութաբերությունը 2011 թվականին կազմել է 5.8%, որը դիտարկված ժամանակահատվածում որևէ միտում չի ցուցաբերել, իսկ ըստ ընդհանուր կապիտալի՝ 12.1% (զծապատկեր 7):



Գծապատկեր 7. *Ապահովագրական ընկերությունների ակտիվների շահութաբերության (ROA) և ընդհանուր կապիտալի շահութաբերության (ROE) փոփոխությունը 2006-2011 թթ.*

Ըստ կապիտալի շահութաբերության ցուցանիշի ՀՀ ապահովագրական շուկայում առաջատարն է «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերությունը՝ 28.7%:

Ինչ վերաբերում է ակտիվների շահութաբերության ցուցանիշին (ROA), ապա այս ցուցանիշով ևս 2011 թվականի տվյալների համաձայն առաջատար դիրք են զբաղեցնում «Նաիրի Ինշուրանս» և «Ռասկո» ընկերությունները: Կատարված վերլուծությունները թույլ են տալիս առանձնացնել ՀՀ ապահովագրական շուկային բնորոշ հետևյալ բնութագրերը.

- ճյուղային շուկան բաժանված է սահմանափակ թվով ընկերությունների միջև (ներկա դրությամբ յոթ ընկերությունների),
- համախառն պահանջարկի առումով յուրաքանչյուր ընկերություն մատուցում է ապահովագրական ծառայությունների մեծ բաժին: Այլ կերպ ասած, շուկայում գին կամ ծառայությունների բանակ թելադրող առաջնորդ չկա:

- շուկան ունի մուտքի սահմանափակ հասանելիություն՝ լիցենզիա ստանալու պայմաններին բավարարելու առումով.
- ապահովագրական ընկերությունների վարքագիծը ռազմավարական է.
- շուկան կարգավորվում է օրենքների, օրենսդրական նորմերի և ԿԲ կողմից սահմանված կանոնակարգերի միջոցով:

Այսպիսի շուկայի համար, որտեղ ընկերություններից մեկի գործադրությունները կարող են ազդել շուկայի բնականոն գործընթացի վրա, խիստ կարևորվում են մասնակիցների գործունեության արդյունավետության և շուկայի կայունության գնահատման և ապահովման խնդիրները:

ՀՀ ապահովագրական շուկայի վերլուծության, ապահովագրական ընկերությունների վարկանիշային գնահատականներ ստանալու և ներուժը գնահատելու տեսանկյունից կարող է օգտակար լինել գործող ընկերությունների գործունեության համեմատական արդյունավետության գնահատումը, ինչը թույլ կտա համատեղ դիտարկել ևս վերը ներկայացված ցուցանիշները:

Վերջին շրջանում լայն կիրառություն է ստացել համեմատական արդյունավետության «պարփակող թաղանթի վերլուծություն» մեթոդը (Data Envelopment Analysis – DEA)<sup>8</sup>, որը թույլ է տալիս չափել համեմատական արդյունավետությունը տարբեր կազմակերպությունների միջև, եթե նրանք համասեռ են. արտադրում են նույն արտադրանքը (ծառայությունը)՝ օգտագործելով նույնանման ռեսուրսներ: Միջազգային փորձում հայտնի են մեթոդի արդյունավետ կիրառման տարբեր ոլորտներ՝ կրթության, առողջապահության, ֆինանսական ծառայությունների և այլն:

Մեթոդի կիրառման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է համեմատվող կազմակերպությունների (ֆիրմաների) գործունեության համար ռեսուրսների և արդյունքների ճիշտ ընտրությամբ:

Ապահովագրական ընկերությունների համար, կարծում ենք, որպես ռեսուրսներ պետք է դիտարկել ակտիվները, սեփական կապիտալը և ապահովագրական պահուստները, իսկ որպես արդյունք՝ զուտ շահույթը:

DEA եղանակը թույլ է տալիս գտնելու այն լավագույն եզրագիծը, որին կայելի է հասնել տվյալ միջավայրում որոշակի ռեսուրսներ տնօրինելու դեպքում. և ընկերությունները գնահատվում են այդ եզրագծի հետ համեմատության մեջ:

DEA եղանակով գնահատված ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեության համեմատական արդյունավետության գնահատականները բերված են աղյուսակ 2-ում, իսկ գործունեության արդյունավետության եզրագիծը գծապատկեր 8-ում:


<sup>8</sup> Charnes, A., Cooper, W.W., Rhodes, E. (1978). Measuring the Efficiency of Decision Making Unit. *European J. Oper. Res.* 2429-444

**Ապահովագրական ընկերությունների ռեսուրսները և արդյունքները, հազար դրամ (31.12.2011 թ. դրությամբ)**

	Ռեսուրսներ			Արդյունք
	Ակտիվներ	Մեկական կապիտալ	Ապահովագրական պահուստներ	Ջուտ շահույթ/վնաս
ՌՈՍԳՈՍՏՐԱՍ	6,459,172	2,269,632	2,960,988	540,438
ՆԱԻԻԻ-ԻՆՇՈՒՐԱՍ	3,931,689	1,852,759	1,158,408	533,095
ՌԵՍՈ	2,847,965	1,664,232	632,233	245,260
ԻՆԳՈ-ԱՐՄԵՆԻԱ	7,203,759	2,217,912	1,438,930	537,556
ՌԱՄԿՈ	2,669,233	1,847,668	414,253	287,338
ԳԱՐԱՆՆ-ԼԻՄԵՆՍ	2,602,271	1,742,136	646,206	167,214
ՄԻԼ-ԻՆՇՈՒՐԱՍ	2,266,078	1,614,855	282,275	80,963
ԿԱՍԿԱԴ-ԻՆՇՈՒՐԱՍ	3,632,717	1,725,846	995,404	56,403

**ՀՀ ապահովագրական ընկերությունների համեմատական արդյունավետության գնահատականները և կշռային բազմապատկիչները (31.12.2012 թ.)**

Ապահովագրական ընկերություն	Համեմատական տրդյունավետության գնահատական	$\mu_1$	$\nu_1$	$\mu_2$	$\nu_2$
ՌՈՍԳՈՍՏՐԱՍ	0.8276	1.531E-06	0	4.406E-07	0
ՆԱԻԻԻ-ԻՆՇՈՒՐԱՍ	1	1.876E-06	2.543E-07	0	0
ՌԵՍՈ	0.7125	2.905E-06	0	2.37E-07	9.577E-07
ԻՆԳՈ-ԱՐՄԵՆԻԱ	0.8424	1.567E-06	0	4.509E-07	0
ՌԱՄԿՈ	1	3.48E-06	2.664E-07	0	6.974E-07
ԳԱՐԱՆՆ-ԼԻՄԵՆՍ	0.5087	3.042E-06	2.329E-07	0	6.096E-07
ՄԻԼ-ԻՆՇՈՒՐԱՍ	0.9112	1.235E-05	0	-3.986E-06	2.634E-05
ԿԱՍԿԱԴ-ԻՆՇՈՒՐԱՍ	0.1203	2.132E-06	0	1.74E-07	7.03E-07



**Գծապատկեր 8. ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեության արդյունավետության եզրագիծը**

Մտացված արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ ապահովագրական շուկայում «Նաիրի-Ինշուրանս», «Ռասկո» ապահովագրական ընկերություններն իրենց ռեսուրսներն օգտագործում են առավելագույն արդյունավետությամբ, իսկ մյուս ընկերությունների աշխատանքում առկա են ոչ արդյունավետության տարրեր: Շուկայում ոչ արդյունավետ գործող ապահովագրական ընկերությունների շարքը գլխավորում է «Կասկադ-Ինշուրանս» ընկերությունը, որի էամբնատական արդյունավետության գնահատականը ամենացածրն է:

Ի դեպ, նկատենք, որ 2012 թվականի հունիսի 12-ի ԿԲ-ի որոշման համաձայն արդեն ուժի մեջ է մտել «Ինգո Արմենիա» և «Կասկադ Ինշուրանս» ապահովագրական ընկերությունների միաձուլման որոշումը, որի շուրջ բանակցությունները ընթանում էին մոտ մեկ տարի:<sup>9</sup>

Ատեսխոսության երրորդ՝ **«ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման հիմնախնդիրները, ռիսկերը և հաղթահարման հայեցակարգային մոտեցումները» գլխում** բացահայտվել և հիմնավորվել են ՀՀ ապահովագրական շուկայում առկա հիմնախնդիրները և առաջադրվել են դրանց լուծման մոտեցումներ:

ՀՀ ապահովագրական շուկայում մատուցվում են միայն ոչ կյանքի ասպիտովագրության գծով խիստ սահմանափակ թվով ապահովագրական ծառայություններ:


ՀՀ ապահովագրական ընկերությունները ներդրումային գործընթացներով, որպես եկամտի ստեղծման աղբյուր, գրեթե չեն զբաղվում, ինչի ասլացույցն է նաև այն, որ ՀՀ ապահովագրական ընկերությունների ակտիվների ու կապիտալի շահութաբերությունը գործնականում անկախ է կապիտալի ներդրումներից, և եկամտաբերությունը ամբողջովին կախված է ապահովագրական գործարքների արդյունքներից:

ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման դիսամբլայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն անհամաչափ է և մեծապես կախված է ՀՀ կառավարության և արտասահմանյան կապիտալով խոշոր ընկերությունների որոշումներից: Ապահովագրական շուկայի ապահովագրավճարների և պայմանագրերի գերակշիռ մասն ապահովվում է պարտադիր ապահովագրությամբ յլրականացվող ԱՊՊԱ-ի միջոցով (69%-ից ավելին):

Կամավոր իրականացվող ապահովագրության և ՀՆԱ-ի կամ բնակչության եկամուտների աճի տեմպերի միջև հստակ կախվածություն չի: դրսևորվում (գծապատկեր 9):

Կամավոր ապահովագրական ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճի տեմպերի անհամապատասխանությունը համախառն արդյունքի կամ բնակչության եկամուտների աճի տեմպերին այն դեպքում, երբ շուկան հեռու է այդ ծառայությունների նկատմամբ հազեցվածությունից, կարելի է բացատրել գնային և տարաբնույթ ոչ գնային գործոններով, որոնք կարելի է դիտել որպես ՀՀ ապահովագրական շուկային բնորոշ հիմնախնդիրներ:

<sup>9</sup> Media am, 04.07.2012



Գծապատկեր 9. ՀՆԱ-ի և կամավոր ապահովագրությամբ ստացված ասպահովագրավճարների աճի (մեկ բնակչի հաշվով) տեմպերը (2006-2011 թթ)

Այդ գործոնների շարքում հատկապես կարևորվում են հետևյալները.

- բնակչության մոտ այդ ծառայություններից օգտվելու մշակույթի պակասը,
- ապահովագրական ընկերությունների նկատմամբ անվստահությունը,
- ապահովագրական տարբեր դասերի ծառայությունների մատուցման հետ կապված ենթակառուցվածքների աշխատանքի որակի նկատմամբ բնակչության անվստահությունը (բժշկական հաստատություններ, դատական մարմիններ, ճանապարհային ոստիկանություն, մաքսատներ և այլն),
- գործազրկության բարձր մակարդակը,
- բնակչության եկամուտների ցածր մակարդակը:

ՀՀ-ում ձևավորված ապահովագրական հարաբերությունները գրեթե հաշվի չեն առնում մարզերի և համայնքների տնտեսական շահերը: Դա բերում է նրան, որ հանրապետության տարածքային միավորներում գրեթե չի օգտագործվում որպես շուկայական ենթակառուցվածքի ապահովագրության ներուժը, ինչը մեծապես կարող էր նպաստել մարզերի և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացին:

ՀՀ ապահովագրական շուկայում ապահովագրական ծառայությունների նկատմամբ պահանջարկի վրա իր բացասական ազդեցությունն է ունենում նաև մատուցվող ծառայությունների տեսականու սահմանափակությունը:

ՀՀ ապահովագրական շուկային բնորոշ լուրջ հիմնախնդիրներից է նաև արհեստավարժ մասնագետների պակասը: Ապահովագրական բիզնեսի արդյունավետությունը պայմանավորող կարևոր գործոններից մեկը ռիսկերի կառավարումն է, ինչը պահանջում է ակտուարի մասնագիտությամբ բարձրորակ արհեստավարժ կադրեր, որոնց նկատմամբ պահանջարկը ՀՀ աշխատաշուկան մինչ օրս չի բավարարում:

ՀՀ ապահովագրական շուկայի ներկա իրավիճակի, զարգացման հետագծի,



շուկայում ձևավորված հիմնախնդիրների և դրանց պատճառահետևանքային կապերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ միայն շուկայական մեխանիզմները կարճաժամկետ հատվածում չեն կարող ապահովել այդ շուկայի զարգացման ցանկալի դինամիկա և իներցիոն (ինքնազարգացման) պարագայում մոտակա տառիներին տնտեսությունը և հանրությունը չեն կարող ակնկալել ցանկալի որակի և քանակի ապահովագրական ծառայություններ:

Ապահովագրական շուկայի զարգացման գործընթացում պետության առանցքային դերի մասին են խոսում նաև այն փաստերը, որ շուկայի թոփքային դիսկրետ զարգացումները մինչ այժմ միայն պետության կողմից ձեռնարկված քայլերի արդյունք են:

ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականությունն իրագործելու նպատակով, եթե խնդիր է դրվում ապահովագրական շուկան օգտագործել որպես ռեսուրս, պետությունը կարող է մասնակցել երկու ուղղություններով: Առաջինը, ապահովագրության ոլորտի իրավական և տնտեսական կարգավորումն է, իսկ երկրորդը՝ ապահովագրական շուկայում պետության անմիջական ներկայության ակտիվացումն է այն ձևերով, որոնք համահունչ են ստեղծված իրավիճակին, թույլատրելի են շուկայական տնտեսության համար և նպաստում են շուկայական գործընթացների ինտենսիվացմանը:

Աշխատանքում կատարված վերլուծությունների, դատողությունների և եզրահանգումների հիման վրա ներկայացնենք ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման գործընթացին պետության մասնակցության հայեցակարգային մոտեցում՝ առաջնորդվելով հետևյալ տրամաբանական կառուցվածքով. արդիակա- նություն, նպատակ, խնդիրներ, ուղղություններ, միջոցառումներ:

ՀՀ ապահովագրական շուկայի ներկա և երկրի ռազմավարական նպատակների տեսանկյունից ցանկալի վիճակների միջև առկա ճեղքվածքը անհրաժեշտություն է դարձնում.

- ռազմավարական նպատակներից ելնելով պայմաներ ստեղծել ապահովագրական շուկայի հեռանկարային զարգացման համար և օժանդակել ընթացիկ խնդիրների լուծմանը,
- ձևավորել շուկայական ժամանակակից ենթակառուցվածքներ՝ օգտագործելով ապահովագրական գործիքները,
- ապահովագրության ոլորտում տեղական և օտարերկրյա ներդրողների պաշտպանությունն ապահովելու նպատակով ռեգակիտորեն ազդել ներդրումային միջավայրի բարելավման վրա,
- համախմբել շահագրգիռ կառույցների ջանքերը ապահովագրության ոլորտում առկա հիմնախնդիրները լուծելու նպատակով, մասնավորապես, հաղթահարելու բնակչության ապահովագրական մշակույթի պակասը, ապահովագրական ընկերությունների նկատմամբ անվստահությունը,
- ուղղակի ազդեցության լծակներ կիրառելով՝ ապահովագրական գործընթացի միջոցով եկամուտների վերաբաշխման ճանապարհով սլայմաններ ապահովել


բնակչության իրական եկամուտների աճի համար:

Ապահովագրության ոլորտի զարգացմանը պետության մասնակցության նպատակ կարելի է համարել հանրային գերակա նպատակներին հասնելու շրջանակներում ապահովագրության օգտագործումը որպես պետական խնդիրների լուծման գործիք:

ՀՀ ապահովագրական շուկայի զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել լուծում պահանջող խնդիրների բազմությունը, որոնց շարքում հատկապես կարելի է կարևորել հետևյալները.

- ենթակառուցվածքների ստեղծում, որը կնպաստի ապահովագրական շուկայի մասնակիցների շահերի պաշտպանությանն ու փոխհամաձայնեցմանը,
- ՀՀ ապահովագրական շուկայի իրավիճակի պարբերական մոնիտորինգ, որը թույլ կտա ժամանակին բացահայտել հակասություններն ու բացասական միտումները,
- ՀՀ բնակչության ապահովագրական մշակույթի և ֆինանսական գրագիտության բարձրացում, ինչը կնպաստի այդ ծառայությունների նկատմամբ կամավոր պահանջարկի մեծացմանը,
- արտերկրում վերաապահովագրության ծավալների կրճատում, ինչը կնպաստի ապահովագրական ընկերությունների տրամադրության տակ մնացյալ միջոցների ավելացմանը՝ ձևավորելով վերջիններից շահույթն ու հարկման բազան,
- որակյալ ակտուար մասնագետների պատրաստում, ինչը թույլ կտա բավարարելու ապահովագրական ընկերությունների պահանջարկը ակտուարների նկատմամբ, որի արդյունքում կբարձրանա ծառայությունների որակը և ճիշտ հենքի վրա կդրվի սակագների ձևավորման գործընթացը,
- ապահովագրական նոր դասերի ներդրում այնպիսի ոլորտներում, որոնք տնտեսության զարգացման ներկա փուլում համարվում են զարգացման գերակա ուղղություն, մասնավորապես խոսքը վերաբերվում է գյուղատնտեսությանը,
- գործուտուլի միջոցների հաշվին պարտադիր ապահովագրության տրամադրում այն ոլորտներում, որոնք կարող են ազդել կամ խնդիրներ առաջացնել աշխատողի առողջության հետ կապված,

ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման տեսանկյունից լուծում պահանջող վերը թվարկված խնդիրներից յուրաքանչյուրն ունի իր այլընտրանքային լուծումների բազմությունը և առանց դրանց էությունը բացահայտելու, լավագույն տարբերակների ընտրության ու հիմնավորման այդ խնդիրների լուծումների ուղղությունների և միջոցառումների ներկայացումը դառնում է ընդամենը թույլատրելի բազմության թվարկում յուրաքանչյուր առանձին կամ ոլորտակի համախմբի խնդիրների համար:



Գծնապատկեր 10. Բնովյացիտի համագործակցության մոդելը

Այդ խնդիրները արդյունավետ լուծում կարող են ստանալ միայն «պետություն», «ապահովագրական բիզնես», «գիտություն», «կրթություն» ինստիտուտների ինովացիոն համագործակցության արդյունքում (գծ. 10):

Ներկայացնենք «պետություն» ինստիտուտի մասնակցությամբ լուծվող որոշ խնդիրների շուրջ մեր նկատառումները:

Ապահովագրական շուկայի համար ենթակառուցվածքավորումը շուկայի զարգացմանը զուգընթաց գործող հիմքերի կատարելագործմանն ու նոր ենթակառուցվածքների ստեղծմանն ուղղված գործընթաց է, որի արդյունքում ձևավորվում է այդ շուկայի զարգացման անհրաժեշտ ռազմավարական ռեսուրս:

ՀՀ ապահովագրական շուկային բնորոշ է ենթակառուցվածքների բացակայությունը, առանց որոնց ծառայությունների այսօր դժվար է պատկերացնել համաշխարհային ապահովագրական շուկայի մասնակից ցանկացած երկրի ապահովագրական շուկա: Օրինակ, առանց երաշխիքային ապահովագրական ֆոնդերի (Insurance Guarantee Funds), հատկապես, երբ խոսքը վերաբերվում է պարտադիր ապահովագրությանը, ապահովագրական բյուրոների (Insurance Bureau), վիճակագրական կենտրոնների, ապահովագրական միությունների, սերվիս կենտրոնների (Service Centers), ակտուարական և վնասը գնահատելու (Loss - adjusters) ենթակառուցվածքների և այլն:

Ապահովագրական շուկայի ոչ միայն զարգացման, այլև կայացման համար անհրաժեշտ նախադրյալ է ակտուարական ենթակառուցվածքի և որակյալ ակտուարների գոյությունը:

Նշված խնդիրներին արդյունավետ լուծում կարելի է տալ պետության մասնակցությամբ մասնավոր ձեռնարկություններ ստեղծելու ճանապարհով:

ՀՀ ապահովագրական շուկայի զարգացումը կասեցնող ամենալուրջ հիմնախնդիրը պահանջարկի աճի խիստ ցածր տեմպն է, այնպիսի կամավոր ապահովագրական ծառայությունների նկատմամբ, որոնք գործող ապահովագրական ընկերություններն ունեն մատուցելու արտոնություններ և զարգացած ապահովագրական շուկաներում ունեն մեծ պահանջարկ:

Հաշվի առնելով, որ ցանկացած դասի ներդրվող պարտադիր ապահովագրությունն իր մեջ առաջին հերթին կրում է սոցիալական ծանրաբեռնվածության կամ գործատուի համար հարկային բեռ, լուրջ խնդիր է առաջանում պարտադիր ապահովագրության տեսակների օպտիմալ քանակի և դրանց գերակայությունների սահմանման հարցում:

Տնտեսության զարգացման ներկա փուլում հանրապետությունում լուծում պահանջող գերակա խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ է հատկացվում.

- > գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը,
- > տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությունների մեղմմանը:

ՀՀ ապահովագրական ընկերություններից ոչ մեկը դեռևս ռիսկի չի դիմում գրուղվելու գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական գործունեությամբ,

ինչը զարգացած երկրներում համարվում է ապահովագրական շուկայի կարևոր բաղադրիչ և զարգացման ուղղություն:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության ներդրման գործընթացը կարելի է իրականացնել միայն պետական մակարդակով մշակված երկարա-ժամկետ ծրագրի հիման վրա՝ փուլային մոտեցումով:

Ատեսախոսության **եզրակացություններ** բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները, որոնցից հիմնականները կայանում են հետևյալում.

1. Համաշխարհային տնտեսության գլոբալացման գործընթացի զարգացման կայուն միտումն իր ազդեցությունն է թողնում ինչպես համաշխարհային, այնպես էլ ազգային ապահովագրական շուկաների վրա, փոփոխությունների են ենթարկվում դրանց քանակական և որակական բնութագրերը: Այդ փոփոխությունները հատկապես վերաբերվում են ապահովագրական և վերապահովագրական կապիտալի համալսարաններին, ապահովագրական ընկերությունների համաձուլման, կլանման և այդ հիմքի վրա վերագրված ապահովագրական ընկերությունների ձևավորման ու միջազգային մասշտաբով ֆինանսական այլ կառույցների հետ միաձուլման գործընթացներին:

2. ԱՊՀ բոլոր երկրներն, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունն, ունեն թույլ զարգացած ապահովագրական շուկա, որտեղ ապահովագրական ծածկույթը շատ նեղ է և չի համապատասխանում համաշխարհային շուկայի կառուցվածքին: Զարգացած ապահովագրական շուկաներ ունեցող երկրներում կյանքի և ոչ կյանքի ապահովագրության մասնաբաժինները գրեթե հավասար են, իսկ երկրներին մեծ մասում շեղումը հոգուտ առաջինի է: Մինչդեռ ԱՊՀ երկրներում կյանքի ապահովագրության մասնաբաժինը չնչին է, ինչը ևս վկայում է այդ երկրներում ապահովագրական մշակույթի խիստ ցածր մակարդակի մասին:

3. ՀՀ ապահովագրական շուկան իր ծավալներով, ապահովագրական ծառայությունների որակով և տեսականիով զիջում է և՛ զարգացած, և՛ զարգացող ապահովագրական շուկաներին:

Ապահովագրական ապրանքի նկատմամբ պահանջարկը հատվածային բնույթ է կրում, և չի հասել հանրային պահանջարկի մակարդակի:

Կամավոր ապահովագրության մակարդակը, ի տարբերություն զարգացած երկրների, զգալիորեն հետ է մնում պարտադիր ապահովագրության մակարդակից:

4. Ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական ծառայությունների մատուցման թիրախային կենտրոնը Երևան քաղաքն է: Միայն ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության օրենքի ընդունման արդյունքում ապահովագրական ընկերությունների գործունեությունը սիշուռժացավ նաև մարզերում: Որոշ ընկերություններ մարզերում ստեղծել են մասնաճյուղեր, իսկ մյուսները՝ գործունեություն են ծավալում գործակալական ցանցի րեզյուլման միջոցով:

5. ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման դիսանիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն անհամաչափ է և մեծապես կախված է ՀՀ կառավարության և արտասահմանյան կապիտալով խոշոր ընկերությունների որոշումներից: Չնայած նրան, որ ապահովագրական ծառայությունները կարելի է դասել բարձր դասի (և որմայ) բարիքների շարքին և ակնկալել, որ բնակչության եկամուտների աճին զուգահեռ այդ ծառայությունների նկատմամբ պահանջարկը պետք է աճի, սակայն իրականում այդ կապը ՀՀ ապահովագրական շուկայում չի ձևավորվում:

6. ՀՀ ապահովագրական շուկայի ենթակառուցվածքների անհամապատասխան լինելու հիմնախնդիրը առավել խորացել է զարգացման ներկա փուլում՝ կապված այդ գործընթացին պետական սահմանափակ մասնակցության և օժանդակության բացակայության հետ: Այսպես, երկրում չկա ապահովագրական պատահույթների հետ կապված վնասը գնահատելու անկախ փորձագետների ենթակառուցվածք, կան լուրջ բարդություններ՝ կապված անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, մշակման և գնահատման հետ, անհամապատասխանություն ապահովագրական ընկերությունների պահանջների և դատական համակարգի, ճանապարհային ոստիկանության մարմինների, տեխնիկական գնտության կետերի և այլ կառույցների միջև:

7. ՀՀ ապահովագրական շուկային բնորոշ լուրջ հիմնախնդիրներից է նաև արհեստավարժ մասնագետների պակասը: Ապահովագրական բիզնեսի արդյունավետությունը պայմանավորող կարևոր գործոններից մեկը ռիսկերի կառավարումն է, ինչը պահանջում է ակտուարի մասնագիտությամբ բարձրորակ արհեստավարժ կադրեր, որոնց նկատմամբ պահանջարկը ՀՀ աշխատաշուկան մինչ օրս չի բավարարում: Դա բերում է նրան, որ գործող ապահովագրական ընկերությունները, որոնցում զբաղվածների թիվը փոքր չէ, ապահովված չեն մասնագետ կադրերով և դրանցից քչերը պատկերացում ունեն ռիսկերի կառավարման գործընթացի մասին: Նման բացի պայմաններում ապահովագրական որոշ ընկերություններ ռիսկը կառավարելու ռազմավարությունը երբեմն փոխարինում են ռիսկից խուսափելու ռազմավարությամբ:

8. ՀՀ ապահովագրական ընկերություններն, որոնք գործում են խիստ ասիմետրիկ տեղեկատվության, ապահովագրական երաշխիքային ֆոնդերի բացակայության, ռիսկերի գնահատման ենթակառուցվածքների սահմանափակության և մրցակցային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ գործոնների բացակայության պայմաններում, ընտրել են այնպիսի ռազմավարություն (ռիսկերը վերաապահովագրելու և պարտադիր ապահովագրության հատվածից հնարավորինս մեծ բաժին ձեռք բերելու), որն ապահովում է բարձր շահույթ (բոլոր ապահովագրական ընկերությունները երկրի 1000 խոշոր հարկատուների բազմությունում են):

Կարևորելով ապահովագրական շուկայի զարգացման դերը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից, իսկ ենթակառուցվածքների

ձևավորումը դիտելով որպես այդ շուկայի ստրատեգիական ռեսուրս, պետության կարևոր գործառույթ է դառնում ուղղակի և անուղղակի ձևերով դրանց ձևավորման գործընթացին նպաստելը:

Նշված խնդիրներին արդյունավետ լուծում կարելի է տալ պետության մասնակցությամբ մասնավոր ձեռնարկություններ ստեղծելու ճանապարհով:

**Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրատարակումներում.**

1. Ազիզբեկյան Վ. Ս. «Ապահովագրական շուկայի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» , Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում հանրապետական գիտաժողովի նյութեր – գիրք 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011թ., էջ 24-30
2. Ազիզբեկյան Վ. Ս. «ՀՀ ապահովագրական շուկայի գնահատման հիմնահարցերը» Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրները, գիտական աշխատանքների ժողովածու գիրք 4, Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ, Երևան, «Օր-Դար» հրատ., 2012թ. էջ 98-105
3. Ազիզբեկյան Վ. Ս. «Համաշխարհային ապովագրական շուկան և զարգացման միտումները», ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Անանիա Շիրակացի» համալս. հրատ., 2012թ. էջ 123-133
4. Ազիզբեկյան Վ. Ս. «ՀՀ ապահովագրական շուկայում առկա հիմնախնդիրները և շուկայի ռիսկերը», ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Անանիա Շիրակացի» համալս. հրատ., 2012թ. էջ 117-125
5. Ազիզբեկյան Վ. Ս. «ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման հիմնախնդիրների հաղթահարման հայեցակարգային մոտեցումները», Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրները, գիտական աշխատանքների ժողովածու գիրք 5, Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ, Երևան, «Օր-Դար» հրատ., 2012թ. էջ 82-91
6. Ազիզբեկյան Վ. Ս. «ՀՀ Ապահովագրական շուկայի զարգացման միտումները 2006-2012թթ.», Երևան, «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես #1, Երևան, 2013թ., էջ 38-41

## ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ СТРАХОВОГО РЫНКА РА И ПУТИ ИХ РЕШЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 "Финансы, денежное обращение и кредит"

Защита диссертации состоится 16-го мая 2013г. в 15<sup>30</sup>, на заседании специализированного совета 014 по экономике ВАК РА, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, ул. М. Налбандяна 128.

### РЕЗЮМЕ

Переход к рыночным отношениям коренным образом изменил роль и значение национальной системы страхования для стимулирования деловой активности, улучшения инвестиционной среды и расширения возможностей защиты от рисков, формирования новой экономической, социальной и информационной среды. Оказывая поддержку в перераспределении рисков между хозяйствующими субъектами и возмещении ущерба посредством накоплений, страхование содействует повышению эффективности деятельности экономики в целом, а также ее отдельных составляющих.

Страховой рынок РА, по сравнению со страховыми рынками развитых стран, находится в процессе становления и значительно отстает по ассортименту предоставляемых услуг, структуре, плотности и показателям уровня проникновения в ВВП.

Цель данной работы – посредством анализа и сравнения международного страхового рынка и рынка страхования РА, а также функций, принципов формирования страхового рынка, оценить и выявить соответствие страхового рынка РА классической модели, определить причины низкого уровня развития и актуальные проблемы страхового рынка РА, обосновать и предложить пути их преодоления.

Для достижения данной цели в работе поставлены следующие задачи:

- изучить роль и значение страхового рынка и страхования в рыночной экономике, а также функции и место данной сферы в социально-экономической системе,
- провести анализ международного страхового рынка и отдельных рынков стран его составляющих с целью выявления тенденций их развития и проведения сравнения со страховым рынком РА,



- изучить эволюцию формирования и развития страхового рынка РА, нормативно-правовые основы и их соответствие международным стандартам,
- провести анализ состояния страхового рынка РА и траектории развития, с целью выявления актуальных проблем,
- изучить вопросы оценки стабильности страхового рынка РА и сравнительной эффективности страховых компаний, с целью оценки уровня использования потенциала страховых компаний,
- провести анализ, направленный на выявление проблем, существующих на страховом рынке РА, с целью выделения тех из них, которые требуют государственного вмешательства,
- разработать концептуальные подходы по решению актуальных проблем страхового рынка РА и его развитию.

Научная новизна полученных в работе результатов заключается в следующем:

- обобщена и уточнена роль государства в процессе развития страхового рынка РА и определены те задачи, решение которых требует государственного содействия.
- обоснована необходимость оценки сравнительной эффективности страховых компаний и возможность применения с этой целью метода “охватывающей оболочки”,
- представлена методология выбора альтернативного варианта обязательного страхования и предложены подходы по его обоснованию,
- обосновано, что одной из основных проблем, препятствующих развитию страхового рынка РА, является отсутствие инфраструктур, и с этой целью предложено и обосновано формирование совместных предприятий по схеме “государство – частный сектор”,
- предложена инновационная концепция развития страхового рынка, на базе сотрудничества подсистем: правительство, наука, образование, бизнес и страховой рынок.

Представленные предложения могут иметь практическое применение со стороны министерств финансов и экономики РА, ЦБ для разработки концепции развития страхового рынка РА, изучения состояния, траектории и тенденций развития страхового рынка, а также с целью проведения политики развития страхового рынка.

Основные результаты диссертационной работы могут быть использованы при изучении курса “Страховой рынок РА”.

**RA INSURANCE MARKET DEVELOPMENT ISSUES AND THE WAYS OF SOLUTION**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.03 "Finance, Cash Flow and Credit".

The defence of the thesis will take place on May 16, 2013 at 15<sup>h</sup> o'clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan Street, Yerevan 0025.

**RESUME**

The transition to a market economy radically changed the role and importance of the national insurance system for encouraging business activity, improving the investment environment and opportunities for risk protection and for the formation of a new economic, social and informed environment. By supporting risk redistribution between businesses and reparation through savings, insurance helps to improve the efficiency of the economy as a whole as well as of its individual components.

Armenian insurance market in comparison with the markets of countries representing the international insurance market is still in the development phase and is far behind from the developed countries in terms of the range, structure, and density of services as well as of indicators of the penetration level in GDP.

The aim of this work is through analysis and comparison of international and RA insurance markets, as well as their functions, principles of formation, to assess and identify the conformance of RA insurance market to the classical model, to identify the causes of underdevelopment and main issues of the local insurance market, to justify and suggest ways for the solution of these issues.

To achieve this goal the following objectives were set:

- examine the role and importance of the insurance market and insurance in a market economy, as well as the function and placement of the sphere in the socio-economic system,
- conduct an analysis of the international insurance market and of the individual markets comprising it, in order to identify their development trends and to compare with RA insurance market,
- investigate the formation and evolution of the insurance market of Armenia, its' legal frameworks and the compliance of the latter to the international standards,

- analyze the condition of the insurance market of Armenia and trajectory of development, in order to identify current problems,
- consider questions connected with the stability of the insurance market of Armenia and the comparative effectiveness of insurance companies in order to assess the level of usage of the potential of insurance companies,
- conduct an analysis aimed at identifying the problems that exist in the insurance market of Armenia in order to highlight issues requiring government intervention,
- develop a conceptual approach to address the main problems facing the insurance market on its way to development.

The following new conclusions and proposals were made as a result:

- problems the solution of which requires government support and which hinder development of the RA insurance market were separated, as well as the role of the government in the development of RA insurance market was clarified.
- the necessity of comparative effectiveness' valuation of insurance companies and the usage of the "Data Envelopment Analysis" method for this purpose were justified,
- a methodology for choosing the best alternative from various types of compulsory insurance was presented and approaches for the justification of this were proposed,
- it was justified that one of the main problems hindering the development of RA insurance market is the lack of appropriate infrastructure and for this purpose a formation of "state - private sector" joint venture companies was proposed.
- innovative concept of insurance market development was proposed based on the cooperation of the following subsystems: government, science, education, business and insurance market.

Proposals submitted may be of a practical use for the Ministries of Finance and Economy of the Republic of Armenia, the Central Bank for the formation of local insurance market development concept, evaluation of its current position, trajectories and trends, as well as for the implementation of appropriate policies in accordance with the concept mentioned above.

The main results of the thesis can be used during the course "The insurance market of Armenia."

